

կարգէ Մոսկուայի Լազարեան ձեմարանի վարչութիւնը: Իր կտակագիրին մէջ, Ս. Յակոբի վանքին նկատմամբ կայ հետեւեալ տրամագրութիւնը. կտակին 24 մասերէն «զերկու մասն տացէ Աթոռոյն սրբոյ Երուսաղեմի. վասն կառուցանելոյ եւ պահպանելոյ անդ զուսումնարան ժառանգաւորաց» (Արձգր. Տն. Ժողով. նիստ ԻԴ. 1911, էջ 76). այս կտակին վերաբերմամբ ուրիշ մանրամասնութիւններու համար տեսնել (Ազգայն. էջ 4460—63): Կը վախճանի 1879, Հոկա. 16 ին Տփղիսի մէջ և կը թաղուի վանքի մայր եկեղեցիին բակը: Իր երկասիրութիւնըն է ձանապարհորդութիւն ի մեծն Հայաստան (հատ. Ա. տպ. Թիֆլիս 1842, հատ. Բ. 1852):

**ՍԱՐԳԻՍ ԳԱԼՅԱ.**— Ս. Յակոբի Ս. Մինաս մատրան երկաթեայ դուռը կը շինէ 1733ին. հետեւեալ յիշատակարանը գետեղուած է նոյն դրան վրայ. «Յիշատակ է դուռս այս սեմօքն հանդերձ մահտեսի Սարգիս բարեպաշտ խալֆային և ծնողացն մհտ. Յովնանեհին, և մհտ. Հեղինէին և ամենայն զարմից նոցին ՌձՁԲ» (= 1733): Իր տուած յիշատակի մասին (տե՛ս ՄՁ. Թ. 532):

**ՍԱՐԳԻՍ ԳԱԼՅԱ, ԷՋՄԷՅԻ.**— 1850-54, Յովաննէս պարքիօրով, ճարտարապետը եղած է նոյն պատրիարքին շինել տուած հոյակապ պատրիարքարանի շէնքին: 1870 ին դարձեալ երուսաղէմ կ'այցելէ Էօմէրի մզկիթը նորոգելու համար. (Սիօն, 1870, էջ 222):

**ՍԱՐԳԻՍ ԴՊԻՐ, ԵՐՈՒՍԱՂԷՄՍՅԻ.**—Մբ. օրդի թաշճի Յարութիւնի. ՌձՂԴ (=1745) թուին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Գրիգոր վրդ. Տաթևացիին մեկն. Յորայ գիրքը. լսպ. Աստուածատուր վրդ. ի համար, նոյն ձեռագիրը Ս. Աթոսի Մատենադարանը կը գտնուի (ՄՁ. Թ. 800), ՌՄԷ (=1758) թուին ընդօրինակած է նաև Փիլոնի ձեռնոց եւ եղից մեկնութեան գիրքը (ՄՁ. Թ. 157), Ստեփանոս Գոյնեղիցանցի աշակերտ Վահրամ սարկաւազի գաղափարին վրայէն՝ որուն յիշատակարանն ունի սա խօսքերը. «ի ծոցն սնուցչի իմոյ աստուածաբնակ տաճարին Աստուածածնի եւ սուրբ փրկչի Անապատին Արմէնի»: Սարգիս դպրի ընդօրինակած է նաև usnroqurքիւնի Արխսոսեկի գիրքը Նչեցի Սիմէոն եպս. ի համար. որ յիշատակ տուած է զայն վերը